Doi: 10.56737/2953-7843-2025.04-51

ԼՈՒՍԻՆԵ ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

ՇՈՒՇԻԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ (ՂԱԶԱՆՉԵՑՈՑ) ԵԿԵՂԵՑԻՆ (ԱՆԴՐԱԴԱՐՁ)[1]

ՄՈՒՏՔ

Մեծ Հայքի 10-րդ նահանգ Արցախը հայ ժողովրդի վաղագույն բնօրրաններից է։

Արցախի վանական համալիրներն ու եկեղեցիները փաստում են, որ տարածքը ի սկզբանե եղել է հայկական։ Արցախի բոլոր բնակավայրերն ունեին իրենց եկեղեցիները որոնք հաճախ հանդես են եկել որպես գրչության կենտրոններ։ Շուշին լինելով Արցախի ռազմավարական ամենակարեւոր կետերից մեկը ունեցել է հրաշք եկեղեցիներ։ Լինելով Արցախի սրտում Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչն առանձնացել է իր վեհաշուք տեսքով ու բարձր ճարտարապետական ոճով։

Մենք անդրադարձել ենք եկեղեցուն, քանզի այսօր վտանգված է նրա ճակատագիրը։

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին գտնվում է պատմական Արցախ աշխարհի Շուշի քաղաքում, որտեղ կար հայկական չորս թաղամաս՝ Ղազանչեցոց, Ագուլեցոց, Մեղրեցոց եւ Ղարաբաղցոց։ Եկեղեցին իր անունը ստացել է Ղազանչեցոց թաղամասում տեղակայված լինելու պատճառով եւ ունի հարուստ պատմություն։

Ղազանչեցոց թաղամասի հայերը եկել են Հայոց պատմական Նախիջեւանի Շահկերտ (Ղազանչի) ավանից։

1750 թ. ամբողջությամբ հայաբնակ գյուղի բնակչությունը Հովհաննես Խնտամիրյանցի գլխավորությամբ ապստամբում է պարսկական պե-

---

[1]* *Ստացվել է՝ 22.05.2025, գրախոսվել է՝ 22.06.2025։ էլ. հասցե՝* yaramishyan1995@mail.ru:

տության պաշտոնյա Հէյտար խանի[2] դեմ։ Ապստամբությունը ճնշվում է, Խնտամիրյանցն սպանվում, որից հետո ղազանչեցիները ստիպված էին թողնել Նախիջեւանը ու հաստատվել Սյունիքի Կապան գավառում[3]։ «Յետ այսորիկ հաստատել Հէյտարայ ի միտս իւր առնուլ վրէժս շահկերտցւոց անտի, ժղվեաց զօրս, եւ պատրաստեցաւ դիմել ի (քաղաք նոցա ի Շահկերտ, որ կոչի եւս Ղազանջի։ Եւ էին շահկերտցիք արք զօրաւորք հաստբազուկք, խրոխտք եւ դիմակալք, ամենեքին հայք, եւ մեծի մասին պղնձագործք...»[4]։ Ինչպես Լեոն է նշում ղազանչեցիները հավանաբար Փանահ խանի ժամանակ թողել են Կապանը եւ բնակություն հաստատել Շուշի քաղաքում, ինչի մասին վկայում է նաեւ Խնտամիրյան (Խանդամիրյան) տոհմի անունը, որն ինչպես հայտնի է Շուշվա ղազանչեցոց թաղի ամենահայտնի տոհմերից էր[5]։

Ղազանչեցոց եկեղեցու մասին առաջին հիշատակողը եղել է պատմաբան, բանասեր, բանաստեղծ Մեսրոպ Թաղիադյանը։ Նա 1821 թ. Եփրեմ Զորագեղցի կաթողիկոսի հետ այցելել է Շուշի եւ մի քանի ամիս մնալով քաղաքում՝ ժամանակ է ունեցել լավ ծանոթանալու եւ տեղեկություններ հաղորդելու քաղաքի մասին։ «Հայքն հաշուէին 500 տունք, եւ ունէին եկեղեցիս երիս, զԱգուլեցւոց՝ զՂարաբաղցւոց՝ եւ զՂազանչւոց, այլ քարակերտ եւ զմեծ Եկեղեցիս ի նորոյ շինէին յայնժամ երկոքին եղբարքն Թառումեանք՝ Զոհրաբ եւ Մարկոս»[6]։ Այս տեղեկությունը վերաբերում է Ղազանչեցոց փայտաշեն հին եկեղեցուն, քանզի նոր եկեղեցու շինարարությունն սկսվել է ավելի ուշ՝ 1868 թ. եւ ավարտվել 1887 թ.։

---

[2] *Այս պաշտօնեային Զամչեանն առաջին անգամ յիշատակում է Նատրշահի (Նադիր շահ) վախճանման ժամանակ. «Այլ ի մեռանիլ Նատրշահին թագաւորեաց ի Մաշաթ թոռն նորա Շահռուհ. եւ սպան զորս միանգամ եգիտ անդ յազգականաց իւրոց։ Զայն իբրեւ լուաւ Ատլշահ եղբօրորդի Նատրշահին, թագաւորեաց եւ ինքն յԱտրպատական աշխարհ եւ եդ եղբայր իւր զԻպրահիմ մարզպան ի Սպահան։ Եւ ի Նախջուան կարգեաց նախարար զՀէյտար Ղուլի խան, որ էր ի նմին քաղաքէ, որ, որ եւ առ ժամանակ մի հանգիստ ետ Հայոց եւ եցոյց բազում սէր. այլ զկնի սակաւուց վասն դոյն ինչ իրաց ի թշնամութիւն դարձեալ ընդ Հայս բազում չարիս հասոյց նոցա եւ բազմադիմի օրինակաւ չարչարեաց եւ տնանկացոյց զիշխզնզուրս նոցա, որք էին ի գաւառն Նախջուանայ, ի Գողթան եւ յայլ տեղիս։ Այսր աղագաւ բազումք ի բնակչաց տեղւոյն փախուցեալ անկան այլ եւ այլ տեղիս. եւ ոմանք յԵրեւան, զի անդ մարթ էր նոցա փոքր մի հանգիստ գտանէ». տե՛ս* Զ Ա Մ Չ Ե Ա Ն, *նշ. աշխ, էջ 837։*

[3] Մ. Զ Ա Մ Չ Ե Ա Ն, *նշ. աշխ, էջ 848։*

[4] Մ. Զ Ա Մ Չ Ե Ա Ն, *նշ. աշխ, էջ 844։*

[5] Լ Է Օ, *Պատմութիւն Ղարաբաղի թեմական հոգեւոր դպրոցի (1838–1913), Թիֆլիզ, 1914, էջ 63։*

[6] Մ. Թ Ա Ղ Ի Ա Դ Ե Ա Ն, *Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. Սարկաւագի Սրբոյ էջմիածնի ի Հայս, հտ. առաջին, Կալկաթա, 1847, էջ 286։*

Հետաքրքիր տեղեկություններ է հայտնում նաեւ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցը, որ Շուշիի մասին խոսելուց լոկ երկու եկեղեցին է յիշատակում՝ «Ագուլիսեցւոց եւ Ղազանչեցւոց»[7]։

Մակար Բարխուդարյանն իր «Արցախ» աշխատության մեջ անդրադառնալով Ղազանչեցոց նորակառույց եկեղեցուն գրում է, որ Ղազանչեցւոց Ամենափրկիչ մայր եկեղեցին շինված է ամբողջապես կրաքարով, կառուցված խաչաձեւ չորս հաստատուն սյուների վրա, հոյակապ եւ բարձրաշեն, լուսավոր եւ փառահեղ ու միանգամայն զարդարուն ներքուստ եւ արտաքուստ։ Երկու փոքր խորանների վրա ունի եւս երկու խորաններ։ Նշանավոր է փայտյա եւ ոսկեզօծ խաչկալն, որ հիշատակ է բարեհամբաւ Ժամհարյան եղբայրների։ Ունի երեք դուռ հարաւային, արեւմտյան եւ հյուսիսային կողմերից, որոնց վրա արտաքուստ շինված է երեք նույնպես հոյակապ եւ գեղեցկաշեն սրահ։ Երկարությունն է 34 մ 75 սմ լայնությունը՝ 22 մ 70 սմ։ Հարաւային դռան գլխին արտաքուստ գրված է. «Շնորհիւ եւ ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ կառուցաւ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբք եւ տրօք բարեպաշտօն ժողովրդականաց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Ղազանչեցւոց Շուշի քաղաքիս, որոյ շինութիւնն սկսեալ ի 1868 ամի յաւուրս թագաւորութեան աստուածազօր ինքնակալ մեծ կայսեր ամենայն Ռուսաց Աղեքսանդրի Բ.-ի եւ ի հայրապետութեան Գէորգայ Դ.-ի. աւարտեցաւ ի 1887 ամի ի թագաւորութեան որդւոյ Նորին օրհնաբանեալ կայսեր Աղեքսանդր Գ.-ի եւ ի կաթուղիկոսութեան Մակարայ [ռաջ]նոյ՝ ի 20 Սեպտեմբերի 1888 ամի»[8]։ Արտաքուստ եկեղեցու արեւմտյան գավթի ճակատին զետեղված է Փրկչի գեղեցիկ քարակերտ պատկերը՝ աղոթական կեցվածքով։ Խաչաձեւ շինության չորս կողմերի բարձրության վրա դրված են արձաններ՝ նույնպես քարից։ Արեւմտյան գագաթի վրա Փրկիչը գրկել է խաչափայտը։ Հյուսիսային գագաթի վրա հառնում է Սուրբ Հովհաննես Մկրտիչը։ Արեւելյան գագաթի վրա պայծառափայլ խաչափայտն է, հարաւային գագաթի վրա իջնում է Սուրբ Հոգին Աստված։

Արտաքուստ արեւմտյան գավթի հյուսիսային կողմում ամփոփված է Անդրեաս եպիսկոպոսի մարմինը, որի տապանաքարի վրա քանդակված են թագ եւ գավազան։ Տապանաքարի վրա կա արձանագրություն.

---

[7] Ս. Ջալալենանց, *Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա., Տփղիս, 1842, էջ 181։*

[8] Մ. Բարխուդարեանց, *Արցախ, Բագու, 1895, էջ 137–138։*

Վիճակաւոր առաջնորդ Թեմին Հայոց Արցախայ Անդրէաս արքեպիսկոպոս Պօլսեցի վախճանեալ է յ8 սեպտեմբերի 1882 ամի ի հասակի 48 ամաց[9]*։*

Եկեղեցու խորանի ստորին հատվածի ետնամասում արված մի այլ արձանագրությունից հայտնի է դառնում նաեւ ճարտարապետի անունը. «Ընծայեցաւ սբ. պատկերս ի յիշատակ աշխատողի շինուն եկեղեցւոյս Աւետիսի Եարամիշենց եւ ի զօրայնուն ամենեցոց 1886 ամի։ Ճարտարապէտ Սիմէօն Տէր Յակոբեանց»։

Դեպի արեւմոտք շուշեցի բարերար Աբրահամ Խանդամիրյանցի կառուցած եռահարկ զանգակատունն է՝ «Յիշատակէ այս զանգակատունս ղազանչեցի հանգուցեալ Գ[ա]բրէլի Յովսէփեան Բատիրեանց եւ Ղազանչեցի հանգուցեալ Մ[ա]հտ[ես]ի Մկրտիչ Մարգարեան Խանդամիրեանց ամուսնոց իւրոյ Բալասանին եւ որդւոցն Յարութին եւ Ստեփանին եւ ղազանչեցւոց առհասարակ բոլոր ժողովրդեանն զօր Ա[ստուա]ծ ընկալցի ի փառս իւր փրկի հոգւոյ բոլորեցոնց կենդանեաց եւ ննջեցելոց յամեն ազգականոց է եւ փրկչական 1858 ամի»[10]*։ Այս արձանագրությունը փաստում է, որ զանգակատունը 10 տարի ավելի շուտ է կառուցվել, քան սկսվել է բուն եկեղեցու շինարարությունը։*

Շահեն Մկրտչյանը իր «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» գրքում անդրադարձել է Ղազանչեցոց եկեղեցուն։ Նա նշում է, որ 1982 թ. եկեղեցու վերանորոգման աշխատանքների կազմակերպման ժամանակ տաճարի հյուսիսային ճակատի լուսամուտի բարավորի վրա հայտնաբերվել է հետեւյալ արձանագրությունը. «Բադկէս Միխայէլ Յոեէփեանցն եւ իւր ծնօղ Հռեփսիմին 18-85-9-25» *(1885 թ. սեպտեմբերի 25)։ Հակառակ կողմի լուսամուտի գոգի արձանագրությունը հետեւյալն է.* «Յիշատակէ վէմս Մահտեսի Յովհաննէս եւ կողակից Բակումայս Քօշարեանցին ի 1896 ամի»։ *Արեւմտյան ճակատապատի վերնամասով փորագրված է հետեւյալ արձանագրությունը.* «Ընծայեաց Շ[ուշի] Ք[աղաքին] Խաչատուր բէկն Ալլահվէրտի բէկէն Ջալալենց 1883», *նույն տեղում կամարատակով,* «Զայս փրկչական 18$\frac{6}{21}$68 է»։ *Հյուսիսային նախամուտքի քարե շրջանակի մեջ գրված է.* «Հոգի Սբ Ա[ստուա]ծ», *հարավայինի մեջ.* «Հայր Ա[ստուա]ծ», *իսկ արեւմտյան կողմի շրջանակում*

---

[9] *Հմմտ.* Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, *նշ. աշխ., էջ 142։*

[10] Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Հայ բարերարների եկեղեցաշինական գործունեությունը Շուշիում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին, Բանբեր Հայաստանի արխիվների, հ. 122, 2014, էջ 451–452։*

«Ամենափրկիչ»: *Տաճարի հարավային ճակատի խաչաձեւ լուսամուտի բարավորին կա հետեւյալ արձանագրությունը.* «Թ. Թամիրենց Շ[ուշի] Ք[աղաքին] նուիրեաց ի յիշատակ հօրեղբոր իւրոյ Մ*[ա]*հ*[տես]*ի Մարգարէի եւ Բաբայի եւ ծնօղաց իւր 1885 ամի»:

Ներսում բեմի ձախ կողմում, մկրտման ավազանի երեսակալի խորքում, խաչանշանի շուրջը ցրված է հետեւյալ արձանագրությունը. «Յիսուս Քրիստոս, Յօհաննէս Մկրտիչ: Եթե ոչ nf ծնցի իջրոյ ի հոգւոյ ոչ կարէ մտանել յարքայութիւն ա[ստուծո]յ 1871»[11]: *Ի դեպ՝ այս արձանագրություններն առաջին անգամ հրատարակել է հենց Մկրտչյանը։*

1847 թ. Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիայի առաջնորդ Բաղդասար Մետրոպոլիտի էջմիածնի Սինոդին ուղղված հայտարարությունը եւս փաստում է, որ Շուշի քաղաքում կա Սբ. Ամենափրկիչ անունը կրող եկեղեցի, որի գմբեթը խարխուլ վիճակում է գտնվում, իսկ եկեղեցու տեսքն արդեն վատթարացել է եւ վերանորոգման կարիք ունի։ Առաջնորդը թույլտվություն է խնդրել եկեղեցուն պատկանող 296 ռուբլի արծաթը հատկացնել այդ աշխատանքներին (թեեւ նշելով, որ այն բավական չէ նշված վերանորոգության համար)։

1853 թ. հունիսի 24-ին էջմիածնի սինոդի կողմից ամենայն հայոց Կաթողիկոսը գրություն է ստանում Շուշիի խարխլված Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին քանդելու եւ տեղը նոր եկեղեցի կառուցելու առաջարկությամբ։ Մատենադարանի կաթողիկոսական դիվաններում[12] պահպանվել է Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու մասին հույժ կարեւոր մի գրություն, որ կբերենք ստորեւ։ Այն փաստում է, որ մինչեւ նոր եկեղեցու կառուցումը Ղազանչեցոց թաղամասն ունեցել է Ամենափրկիչ անունով հին եկեղեցի։

ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶԱՆԱԿԱՏԱՐ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՍՊԵՏԻ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ Ի ԼՈՒՍԱՒՈՐՉԵԱՆ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԷՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ի սինօդիս սրբոյ էջմիածնի լուան զզեկուցումն. Թեմական առաջնորդն Ղարաբաղու Բաղդասար արքեպիսկոպոսն ի 26 մարտի 1847 ամի համար 19. Յայտնեաց սինօդիս՝ թէ ժողովրդականք սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Շուշ-

---

[11] Շ. Մկրտչյան, *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 223–224։*

[12] *Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, կաթողիկոսական դիւան, թղթ. 123, վավ. 345, թ. 15–18, ձեռագիր, բնագիր։*

տյ ներկայացեալ յայտնեցին Նորին Բարձր Սրբազնութեան՝ թէ յիշեալ եկեղեցւոյ իւրեանց գմբեթն խարխալեալ է, սալակապն տանեաց խախտեալ է եւ ծեփն բոլոր շինուածոյն ի ներքուստ ոչնչացեալ է. ուստի ցանկալով նոցա վերանորոգել զայնոսիկ խախտուածս գործադրութեամբ եկեղեցական առ ձեռն գտանեցեալ դրամոց եւ հոգալով զպակասորդն ծախուց ի սեպհականութեանց իւրեանց՝ խնդրեալ էին առ այն զթոյլատուութիւն, առ որ եւ Նորին Բարձր Սրբազնութիւն խնդրեալ էր զլուծումն սինոդիս, յաւելլով ընդ նմին՝ թէ եկեղեցական գումարն, զոր կամին ի գործ դնել վասն վերոգրեալ հարկաւորութեան, յամին 1847 էր 296 ռուբլի արծաթեայ: Այլ որովհետեւ ի վերոգրեալ առաջարկութեան չէր բացատրեալ որքանութիւն պահանջեալն ծախուց, եւ այն՝ թէ որպիսի եղանակաւ եւ ում յանձն լինի վերահասութիւն այնորիկ, վասն որոյ սինոդս ի 16 մայիսի 1847 ամի համար 874, հրամանագրեաց վիճակային Հայոց Ղարաբաղու՝ ընդ ձեռն քաղաքական ճարտարապետին արձանացուցանել ի ցուցակ զպահանջելի քանակութիւն ծախուց վասն կարկատման խախտուածոց վերոյիշեալ եկեղեցւոյն: Իսկ վասն եղանակին ծախսարարութեան եւ միւս հարկաւորն նախագահութեանց կազմել տալ ժողովրդականացն զթուղթ համախօսութեան նոցուն ստորագրութեամբք, զորս եւ ի միասին առաջի առնել սինոդիս նորոգ առաջարկութեամբ, զորմէ կրկնեցաւ նմին ի 13 օգոստոսի 1848 ամի եւ վերակրկնեցաւ յ31 յունուարի 1850 ամի եւ ի 27 մարտի 1851 ամի համարոք 1132, 72: Առ այս վիճակային կոնսիստորիայն Ղարաբաղու հուսկ ուրեմն ի 22 մայիսի 1851 ամի, համարաւ 302, յայտեաց սինոդիս. 1. Թէ զկնի բազմիցս յորդորելոյ ըստ ձեռն վիճակաւոր համախօսութիւն եւ զցուցակ ծախուց՝ նոքա ամենեքեան ոչ յօժարեցան, այլ միանգամայն յամառեալ մնացին ի կամս իւրեանց: 2. Եկեղեցին այն գոլով փոքրադիր եւ անբաւական վասն բազմութեան ժողովրդականացն ի հանդիսաւոր աւուրս, եւս եւ ըստ վկայութեան Բարձր Սրբազան ատենապետին եւ ատենակալաց կոնսիստորիային գոլով բոլորովին հնաշէն եւ խախտեալ ի բոլոր շինուածս՝ կարօտի նորոգ հիմնարկութեան եւ շինութեան: Վասն որոյ յիշատակեալ կարկատանքն, զորս մին առնել ժողովրդականք նորին, բոլորովին աւելորդ եւ վնասակար համարին: Ուստի կոնսիստորիայն խնդրեաց զտնօրէնութիւն սինոդիս, վասն կառուցանելոյ ի պէտս յիշատակեալ ժողովրդականաց զնոր եկեղեցի ի տեղի հնոյն, եւ ի դէպս համանայն գտանելոյ սինոդիս ընդ այս՝ յանձնել Բաղդասար արքեպիսկոպոսին յորդորել զյիշեալ ժողովրդականս առ ի հոգալ զկառուցումն նոր եկեղեցւոյ: Յետ զեկուցանելոյ Ջերում Սրբազնակատար Վեհափառութենէ զվերոգրեալ հանգանակաց գոր-

ծոյս, ըստ բարեհաճութեան Ձերդ Սրբազնութեան՝ հրամանագրութեամբ, կառավարչական մասին սինոդիս ի հոկտեմբերի 1851 ամի համար 1197. Պահանջեցան ի կոնսիստորիայէն Ղարաբաղու յետագայ տեղեկութիւնք. 1. Թէ խախտուածք յիշեալ եկեղեցւոյ բոլորովին վտանգաւորք համարին վասն շարունակելոյ ի նմին զժամերգութիւն, թէ միմիայն մասնաւոր կարկատանաց կարօտին: 2. Ի վերջին դէպս որքան ծախք պահանջին վասն կարկատանաց, եւ ո՞ր յարկանէ յանուանէ մասունք նորին կարօտին կարկատանաց: 3. Ժողովրդականք նորին համաձայն խոստմանց իւրեանց յօժարի՞ն նուիրամատոյց լինել իւրեանց սեպհականութեանց, վասն հոգալոյ զպակասորդն ծախուց այնց կարկատանաց եւ ո՞րպիսի պայմանադրութեամբ եւ 4. Եթէ եկեղեցին այն երեւեսցի վտանգաւոր ըստ խախտուածոցն եւ անյարմար ըստ փոքրկութեան, յայն դէպս կարելի՞ է արդեօք, զի ժողովրդականք նորին ժամանակաւորապէս կատարեսցեն զկարգն աստուածպաշտութեան ի միւս եկեղեցիս քաղաքին, մինչ միջոցք ձեռնհասութեանց ներեսցին կառուցանել զնոր եկեղեցի: Առ այս յիշատակեալ կոնսիստորիայն ի 10 նոյեմբերի նոյն 1851 ամի, համարաւ 599, յայտնեաց սինոդիս՝ թէ ժողովրդականք յիշեալ ի լսելն զվերոգրեալ հարցմունս՝ յայտնեցին նախ, թէ խախտուածք յիշեալ եկեղեցւոյ իւրեանց են այսոքիկ. Գմբէթն խարխալեալ է, սալակապ տանիքն խախտեալք են եւ ծեփն շինութեան ի ներքուստ վատթարացեալ է: Երկրորդ՝ վասն կարկատանաց այնց խախտուածոց բաւական համարի 2000 ռուբլի արծաթայ. ի հաշիւ որոյ մարթ է ի գործ դնել զգտանեցեալ յամին 1851 եկեղեցական 1324 ռուբլի 56 կոպէկ եւ ապա զպակասորդն ծախուց յիւրեանց սեպհականութեանց լնուլ, եւ երրորդ՝ եկեղեցին այն ըստ բացատրեալ ի վեր անդր խախտեալ դրութեան իւրում. չէ վտանգաւոր եւ անյուսալի վասն շարունակելոյ ի նմին զժամերգութիւն, եւ չունին զմիջոցս կառուցանելոյ ի տեղին հնոյն զնոր եկեղեցի. իսկ փոքրկութիւն նորին չէ մշտապէս այնչափ զգալի, այլ միայն յեկեղեցին հանդիսավոր աւուրս տարւոյն, եւ թէ՝ ոչ յօժարին նրանք, զի ծախսարարութիւն կարկատանաց եկեղեցւոյ իւրեանց լիցի ցուցմամբ քաղաքական ճարտարապետին, վասնզի այն չպահանջէ ամենեւին զնոր ձեւակերպութիւն: Սինոդս ընկալեալ ի ճիշտ կշռադատութիւն զնախընթաց եւ զյետագայ հանգամանս այսր գործոյ՝ եգիտ. ա) զի եկեղեցին այն ըստ վկայութեան Բարձր Սրբազան ատենապետին եւ ատենակալաց կոնսիստորին Ղարաբաղու՝ գոլով հնաշէն եւ խախտեալ գրէթ ի բոլոր մասունս շինութեան՝ կարօտի նորոգ հիմնարկութեան եւ շինութեան, այլ ժողովրդականք ցուցանեն զխախտուածս նորին միայն ի գմբեթն, ի սալակապ տանիսն եւ ի ծեփս շինութեան

ի ներքուստ, եւ բ) յիշեալ ատենապետն եւ ատենակալք կոնսիստորիային վկայեալ էին՝ թէ ի պատճառս կարկատանաց նոցին աւելորդք են եւ ի զուր բոլորովին, սակայն ժողովրդականքն՝ վասն հաստատուն պահպանելոյ զշինութիւն այնր եկեղեցւոյ բաւական համարեն զկարկատումն 2000 ռուբլի ծախուց։ Ուստի առ ի հաստատուն եղանակաւ պարզաբանել զիսկութիւն այսր գործոյ՝ սինոդս ի 18 յունվարի անցեալ 1852 ամի, համարաւ 510, հրամանագրեաց կոնսիստորիային Ղարաբաղու՝ անընդմիջապէս հրաւիրել զքաղաքական ճարտարապետ տեղւոյն, յանձնել նմա, զի ի միասին ըստ միում յանդամոց կոնսիստորիին վերահասու լիցի ամենայն խախտեալ մասանց շինութեան եկեղեցւոյն այնորիկ, զորս եւ արձանացուցեալ մանրամասնօրէն ի գիր՝ ներկայացուցէ զայն կոնսիստորին՝ հանդերձ իւրովն դատողութեամբ՝ թէ միմիայն կարկատումն այնց խախտուածոց կարէ՞ լինել բաւական վասն հաստատուն պահպանելոյ զշինութիւն տաճարին թէ ոչ, եւ յայս դէպս ո՞րքան դրամք պահանջին վասն ծախուց ի վերայ նախենթադրեալն կարկատանաց. յետ որոյ զայն արձանագրութիւն մատուցանել սինոդիս։ Ի կատարումն այսր հրամանագրութեան կոնսիստորիայն Ղարաբաղու ըստ յայտարարութեան ի 29 մայիսի անցելոյ համարաւ 302, առաջի արարեալ սինոդին զհրամայեցեալ ճարտարապետական արձանագրութիւն, կազմեալ ի ներկայութեան անդամոյ նորին Ռափայէլ քահանային, յայտնէ՝ թէ ճարտարապետն ի պատճառս կասկածանաց իւրոց վասն նորանոր ի վեր երեւելի խախտուածոց եկեղեցւոյն՝ կամովին լսէ նշանակել զքանակութիւն ծախուց վասն կարկատանաց, զորս աւելորդ համարեալ՝ օգտաւէտագոյն վարկանի քակել զայն եւ ի նիւթոց նորին կառուցանել զնորս համաձայն կանխազեկոյց դատողութեան կոնսիստորիային, գծագրելոյ ի յայտարարութեան նորին ի 22 մայիսի 1851 ամի համարաւ 302։ Սահմանեցիին, համաձայն արձանագրութեան քաղաքական ճարտարապետին եւ դատողութեամբ թեմական իշխանութեան Հայոց Ղարաբաղու՝ գտեալ կարեւոր եւ օգտակար զկառուցումն նորոգ եկեղեցւոյ ի պէտս Ղազանչեցոց հասարակութեան Հայոց Շուշւոյ՝ քան զկարկատումն հնոյն, մատուցմամբ յիշեալ ճարտարապետական արձանագրութեան եւ գծագրութեամբ ամենայն տողեալ ի վերայ հանգամանաց՝ խնդրել խոնարհաբար առ այն զբարեհաճ լուծումն Ձերդ Վեհափառութեան, յարակցելով ընդ նմին՝ թէ յիշեալ եկեղեցին ի վերջ 1852 ամի ունէր առ ձեռն գումար դրամոց 1869 ռուբլի 46 կոպ. արծ. եւ թէ՝ զհարկաւորն տնօրէնութիւնս վասն կազմել տալոյ զպլան, զքասադ եւ զպատկեր ծախուց վասն յիշատակեալ նորոգ կառուցանելի եկեղեցւոյն, եւ յաղագս ի մասին պատրաստելոյ զպահանջելի որքանութիւն դրա-

մոց վասն այսր հարկաւորութեան՝ սինօդս ունի առնել յետ ստացման խնդրեալ լուծման Ձերդ Սրբութեան։

Անդամք սինօդի՝ ՂՈՒԿԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Պաշտօնակատար տեղապահի՝ ՅՈՎՀ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Շուրջ 5 տարի Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիայի եւ էջմիածնի Սինոդի միջեւ ընթացող քննարկումների արդյունքում, երբ հինը վերանորոգելու կամ նորը կառուցելու վերաբերյալ կարծիքներ էին հնչում, Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսը վճռում է. «Առ այն զայս մեր խորհուրդք տամք Սինօդին յառաջադրել վիճակաւորի եւ Անդամոց կոնսիստօրի եւ ամենայն ժողովրդեան Հայոց Շուշուայ քաղաքի, թէ առաւել, կասկածելի է առանց համաձայնութեանց ճարտարապետաց կարկատել զխախտութիւն, եւ ո՛չ էլ դիւրին շինելն զնոր եկեղեցի ծանր ծախուք, որ եւս վնասակար է հասարակութեան, այլ հանճարաւոր խորհրդածութեամբ զմտաւ ածել զի թէ աներկիւղ իցէ ժամասացութիւն ի սուրբ Փրկիչ եկեղեցւոջ դարձեալ կառավարել այս հին եկեղեցեաւն իւրեանց, իսկ թէ իցէ կասկածելի լաւ է կա՛մ վարձել եւ կա՛մ շինել ի նորոյ զմի բաւականաչափ ժողովրդեան աղօթարան հասարակ թէեւ ծախուք, մինչեւ Աստուածային խնամակալութիւն տացէ ժողովրդեան զյաջող միջոց վասն շինելոյ զեկեղեցին առաւել փառաւոր եւ յաղագս նորոգութեանց անձնական տաճարաց ամենից հոգեւորականաց եւ ժողովրդականաց արանց եւ կանանց, հարստաց եւ աղքատաց, ծերոց եւ տղայոց վասն որոց ամենեցուն մատոյց զանձն իւր միածին Որդին Աստուծոյ պատարագ հաշտութիւն Աստուծոյ Հօր երկնաւորի եւս թողութիւն մեղաց մեր ամենեցուն։ Յամի ազգական 1302. եւ Փրկչական 1853. Օգոստոսի 1. Թիֆլիզ։ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ներսէս»[13]։

Աղա Մահտեսի-Հովհաննես Յարամիշյանցը եւ Շուշիի քաղաքացի Աբրահամ Խանդամիրյանցը տեղի վիճակային կոնսիստորիային ներկայացնում են արդեն հանգուցյալ Բաղդասար Մետրոպոլիտի դեռ 1844 թ. ստացած թույլտվությունը՝ սեփական միջոցներով Ղազանչեցեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցու քարաշեն զանգակատան համար։ Աբրահամ Խանդամիրյանցն եւ տեղաբնակ Հովհաննես Բատիրյանցը կրկին ցանկություն են հայտնում տվյալ գործը ավարտին հասցնել՝ յուրաքանչյուրը պատրաս-

---

[13] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գործ 2145, թ. 26 եւ շրջ.։*

տակամություն հայտնելով՝ 1500 ռուբլի արծաթ հատկացնելու։ Աբրահամ Խանդամիրյանցը խոստանում էր, չբավականացնելու դեպքում լրացնել[14]։

1860-ական թվականներին ծրագրվել էր եկեղեցու տեղը կառուցել Անիի մայր տաճարին նման եկեղեցի։ Սակայն, որոշ պատճառներով, այդ մտահղացումը չիրականացվեց։ Ուշագրավ տեղեկություն է պահպանվել եկեղեցու նախագծի քննարկման մասին, համաձայն որի՝ ճարտարապետները եկեղեցին կառուցելու ընթացքում պետք է հաշվի առնեին նաեւ այն հանգամանքը, ըստ որի պատարագիչ քահանան, նախքան արարողակարգն սկսելը, պետք է մեղքերի թողություն խնդրեր մեկ այլ քահանայից։ Սակայն, քանի որ տվյալ դեպքում եկեղեցին դեռեւս մեկ քահանա ուներ, հետեւաբար մեկ առանձնասենյակի անհրաժեշտություն եւս կար։

1868 թ. մայիսի 21-ին, ճարտարապետ Սիմոն Տեր-Հակոբյանի նախագծին համապատասխան, դրվեցին եկեղեցու հիմքերը։ Նույն թվականի հունիսի 20-ին, Գրիգոր եպիսկոպոս Սագինյանցի առաջնորդությամբ, տեղի ունեցավ «...մեծաւ հանդիսիւ հանդերձ դասուք հոգեւորականաց եւ խուռն բազմութեամբ ժողովրդականաց կատարեցաւ օծումն հիմանց Ամենափրկիչ անուն եկեղեցւոյ Հայոց Ղազանչեցւոց հասարակութեան Շուշի քաղաքի...»[15]։

Ըստ արխիվային փաստաթղթերի՝ եկեղեցին պիտի նման լիներ Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկչին (ի նկատի ունի հին եկեղեցուն), բայց ավելի մեծ չափերի. «ինչ վերաբերի առ կոչումն մակարդակին նորոգ մտադրեալ կառուցանելի եկեղեցւոյն կարէ Վիճակային Հոգեւոր Ատեանդ գործնական կարգաւ այժմէն իսկ հաղորդել տեղւոյս ինժիներնիյ ճարտարապետին առ ի կազմելոյ զնոր յարմարաւոր պլան ըստ օրինակի Հայաստանեայց եկեղեցւոյ, կամ նմա ձեւոյն Ամենափրկչի եկեղեցւոյն Ղազանչեցւոց Շուշի քաղաքի, բայց երկու եւ կէս գազ երկայնութեամբ աւելի քան զայն եւ երկու գազ խանի աւելի ի լայնութեան, եւ ապա զայն պլան ի դիմաց իւրոց առաջարկեսցէ ուր հարկ է ի հաստատութիւն նորին» [16]։

1887 թ. մարտի 21-ին Արցախի սրբազան առաջնորդ Սագինյան-

---

[14] *ՀԱԱ, ֆ. 56, ՀԱԱ, ց. 1, գործ 2145, թ. 30 եւ շրջ.։*

[15] *Վ. Բալայան, Մ. Բալայան, Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին որպես Արցախի թեմի նստավայր, «Վեմ» համահայկական հանդես, 2024, հ. 1, էջ 68–69։*

[16] *«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան», գիրք ԺԹ., Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1649–1917), փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Երեւան, 2014, էջ 140։*

ցի[17] առաջնորդությամբ կատարվեց Ղազանչեցվոց Սուրբ Ամենափրկիչ նորակառույց եկեղեցու օծումը։ Հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել ժամանակի՝ «Արձագանք», «Մշակ», «Մասիս», «Նոր-դար» թերթերում։

«Արձագանք» թերթը գրում է. «Մարտի 20-ին կեսօրից հետո Շուշի քաղաքի եկեղեցիների զանգերը ղողանջում էին։ Հոգեւորական դասը սրբազան Սագինյանցի առաջնորդությամբ եւ մեծ բազմության ուղեկցությամբ Ագուլեցոց մայր եկեղեցուց սրբալույս մեռոնի սրվակները եկեղեցական հանդեսով տանում էր դէպի ղազանչեցվոց նորակառույց եկեղեցին։ Գրիգոր Լուսավորչի մուտն ի վիրապն տոնին պիտի օծվեր եկեղեցին, որ իր հիմնադրման օրից կրում է Ամենափրկիչ անունը։ Եկեղեցու սեղանի ճակատին գրված էր Քրիստոսի անմահ խոսքերը. «Եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ Իմմէ յանուն իմ, տացէ ձեզ» (Յովհ. ԺԶ. 17), իսկ նրա երկու կողքի փոքրիկ սեղաններից մեկի ճակատային մասում դրոշմված է. «Որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ նա յԻս բնակեսցի եւ Ես ի նմա» (Յովհ. Զ. 53), եւ մյուսին. «Հոգի է Աստուած, եւ երկիրպագուաց Նորա Հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել» (Յովհ. Դ. 24)[18]։

Արարողությունն սկսվել էր առավոտյան ժամը 6-ին, իսկ ժողովուրդն ավելի վաղ էր հավաքվել։ Կեսօրին եկեղեցին այնքան էր լցվել, որ շարժվելու տեղ անգամ չկար։ Նույնքան բազմություն էլ հավաքվել էր եկեղեցու բակում եւ չէր կարողանում ներս մտնել։ Բացումը շատ փառավոր էր։ Սրբազան առաջնորդն իր քարոզի մեջ օրհնել էր եկեղեցու շինությանը մասնակից նվիրատուներին, կառուցած արհեստավորներին եւ մանավանդ երեցփոխ Երամիշյանցին, որ 4 տարի շարունակ ջանք ու եռանդ չէր խնայել տաճարն ավարտելու եւ ծախսերը կրճատելու համար։ Քարոզից հետո սկսվել էր պատարագը, որն ավարտվել էր ժամը 3-ին։ Չնայած կատարված ահռելի աշխատանքին եկեղեցին թե՛ դրսից եւ թե՛ ներսից ուներ թերություններ, բայց ինչպես ժամանակակիցներից

---

[17] Նկատենք, որ եւ՛ Սագինեանը, եւ՛ վերեւում յիշուած Մակար եպս. Բարխուդարեանը 1885 թ. դիտում էին իբրեւ կաթողիկոսութեան հնարաւոր թեկնածու. «Սինօդականները եւ միաբանները, Հ. Առաքելեանի ասելով (այստեղ է, Հնդկաստանի կողմից պատգամաւոր էր), մինչեւ պատգամաւորների ժողովուելը վճռած են եղել կաթողիկոս ընտրել Մակարին եւ կանդիդատ Սագինեանին». տե՛ս «Շիրվանզադէ. Նամականի», կազմ., առաջաբան եւ ծան. Գեգէ (անտիպ)։

[18] Այս կապակցությամբ տե՛ս նաեւ «Արձագանք», Թիֆլիս, 1887, № 11, էջ 165։

շատերն են հավատացնում, եկեղեցու նմանը չկար Կովկասի եւ ոչ մի հայաբնակ վայրում։ Այն կառուցված էր հայոց հին ճարտարապետական ոճով։ Ճարտարապետը դասավորության եւ ոճի տեսանկյունից աչքի առաջ է ունեցել Անիի մայր տաճարը[19]։

Սակայն նույն աղբյուրներից տեղեկանում ենք, որ եկեղեցին չուներ գմբեթ, որի շինարարության ծախսը խոստացել էր հոգալ Թադեւոս Թամիրյանցը[20]։

«Նոր-դար» թերթը գրում է. « Ղազանչեցւոց Ամենափրկիչ եկեղեցու շինութիւնը նոր են աւարտել, դեռ նրա կաթողիկէի շինարարութիւնը աւարտուած չէ, իսկ եկեղեցին 1¾ արշին հողի մէջ թաղուած էր։ Շուշիի բնակիչ Յովհաննէս Խունիեանցը տեսնելով այս անմխիթար վիճակը, մշակներ է վարձում, քարտաշներ կանչում, հողը վերցնում եւ եկեղեցու շուրջը սալայատակել տալիս։ Եկեղեցու արեւմտեան դարպասից սկսած՝ զանգակատան միջով, սալայատակում է մինչեւ հիւսիսային դուռը, լայնութիւնը՝ 2, երկարութիւնը 4 քառակուսի սաժէն։ Հս-արմ կողմում Անդրէաս արքեպիսկոպոսի գերեզմանի շուրջը պատում է գեղեցիկ քարերով։ Զանգակատան հարաւային կողմից սկսած արեւմտեան դռան մօտով մինչեւ հարաւային դուռը, այստեղից էլ մինչեւ հարաւային խորանը նոյնպէս սալայատակում է։ Առայժմ կատարուած աշխատանքների համար ծախսուել է 1200 ռուբլի։ 4 ամիս է ինչ գործը առաջ է գնում։ Յովհաննես Խունեանցը ամեն շաբաթ եւ կիրակի վարպետներին, մշակներին ճաշ է տալիս»[21]։

Շինարարության ավարտից հետո Ղազանչեցոցը ծառայել է որպես Արցախի հոգեւոր առաջնորդանիստ՝ հույս, հավատ ու սեր ներշնչելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու զավակներին։

ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉԸ Ի. ԴԱՐՈՒՄ

1905–1906 թ. թուրք-թաթարական գազազած խուժանը կոտորածներ կազմակերպեց ոչ միայն Բաքվի, Ելիզավետպոլի, Երեւանի այլ նաեւ Արցախի տարածքում, որից տուժեց արցախահայությունը։ Մուսուլմանները հրո ճարակ դարձրին երբեմնի շեն ու կանգուն Շուշի քաղաքը։ Ամե-

---

[19] *«Մշակ», Թիֆլիս, 1887, հ. 33, էջ 2, տե՛ս նաեւ «Մասիս», Կ. Պոլիս, 1887, № 3868, էջ 114։*

[20] *Իր մասին տե՛ս* Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Բարեգործական ընկերությունների եվ բարերարների սոցիալ-տնտեսական գործունեությունից Շուշիում* XIX *դարում, «Գիտական Արցախ», 2018, հ. 1, էջ 48 եւ յջ.։*

[21] *«Նոր-դար», Թիֆլիս, 1889, հ. 170, էջ 2։*

նաշատը տուժեց հայկական հարուստ Ղազանչեցոց թաղամասը։ Թուրքերն այրեցին Ամիրջանենց (Ամիրջանյաններ), Խունունց, Ումբրի-բեգենց, Մ. Խանդամիրյանի տունն ու թատրոնը, Թամիրենց, Ամբրումենց, Մարկոսենց տները, Զոփռենց, Անտոնենց, Ջալալունց, Պատվականենց քարաշեն տները քաղաքային օրիորդական ուսումնարանը, Ռեալական դպրոցը։ Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչը բարեբախտաբար չտուժեց, Ագուլեցոց եկեղեցին չնայած հիմնահատակ չավերվեց, բայց թուրքերը պղծեցին այն[22]։

Շուշին 1920 թ. ապրեց իր մեծագույն ողբերգություններից մեկը։ Երկրամասը պատմության ողջ ընթացքում չէր տեսել այնպիսի դաժանություններ ինչպիսին 1920 թ. մարտյան օրերին։ Թուրքերը Շուշի քաղաքում եւ հարակից գյուղերում կազմակերպեցին հայերի սպանդ[23]։ Շուշվա ջարդերն սկսվեցին 1920 թ. մարտի 22-ին եւ մի քանի օրում հայկական Շուշիից ոչինչ չմնաց։ Արյունահեղության կազմակերպիչներն ու ոգեշնչողները ամենախաղաղ մասնագիտությունն ունեին, որ սակայն կյանքեր փրկողից վեր էին ածվել կյանք խլողի։ «Այդ երկու բժիշկները տանջվող մարդկությանը ծառայելու ակադեմիական ուխտ արած, հրամայում են խուժանին՝ կոտորեցե՛ք, այրեցե՛ք, կողոպտեցե՛ք, ձերն են հայերի կանայք ու աղջիկները։ Եվ դժբախտ քաղաքը լցվում է սարսափներով։ Առնվազն յոթ հազար անմեղ մարդիկ մորթվում են։ Մի հատ տուն չի ազատվում բոցերից։ Հայ կանանց ու աղջիկների լկումն ու տանջանքները անցնում են ամեն չափ ու սահման։ Մոտ հինգ հազար հոգի գերի են մնում Սուլթանով եւ Մեհմանդարով բժիշկների ձեռքին։ Գանձակի կողմից ադրբեջանական մեծ արշավանք է սկսվում, որ ճանապարհին ոչնչացնում է տասնյակներով հայ գյուղեր»[24]։ Փրկվողներ չկային կամ գրեթե չկային։

Շուշիի ցեղասպանության զոհ դարձավ նաեւ Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը։ Նրա գլուխը թուրքերը կտրել եւ հանել էին ցցի վրա, այնուհետեւ շրջելով Շուշիի թաղամասերում ահ ու սարսափ էին տարածում։ Ականատեսը նկարագրում է.

«Երբ թուրքերը խուժեցին բակ, սկսեցին բոլորին անխտիր բռնել։ Կանանց եւ աղջիկներին բռնաբարում էին, ամենագեղեցիկներին տա-

---

[22] *«Տարազ», Թիֆլիս, 1905, հ. 27, էջ 286։*

[23] Բ. Ուլուբաբյան, *Արցախի պատմությունն սկզբից մինչեւ մեր օրերը, Երեւան, 1994, էջ 210։*

[24] Լեո, *Անցյալից, հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 438։*

նում էին իրենց համար, մնացածներին՝ սպանում։ Ապա սկսեցին հաշվեհարդար տեսնել գերի տղամարդկանց հետ, որոնց նախօրոք կապկպել էին։ Նրանց հերթով բերում էին դահճի մոտ, որ կաշվե գոգնոց հագած նստել էր աթոռին՝ դանակն աջ ձեռքում։ Առաջինը նրա մոտ բերին քահանա Տեր-Հարությունյանին, որը պատկառելի, երկար մորուքով տղամարդ էր։ Նրա ձեռքերը կապված էին մեջքին, իսկ ոտքերը՝ շղթայված։ Դահիճը նրան տապալեց մեջքի վրա, գլուխը դրեց ծնկին, ապա բռնեց մորուքից, դժվարությամբ կտրեց գլուխը։ Թուրքերը քահանայի գլուխն ամրացրին ցցի վրա եւ, ի տես բոլորի, ման էին տալիս թուրքական թաղամասերով։ Հետո մեկը մյուսի ետեւից դահճի մոտ սկսեցին բերել 15–20 տարեկան տղաների։ Երբ բերեցին հերթական զոհին, դահիճը բռնեց արդեն ուժասպառ մարդու ծնոտից, գցեց մեջքի վրա, գլուխը ծոծրակի կողմից դրեց ծնկին, երկու մատը մտցրեց քթածակերի մեջ իսկ աջով դանակը սահեցրեց կոկորդի վրայով։ Ապա ոտքով մի կողմ հրեց թփրտացող մարմինը։ Իսկ թուրք ամբոխը գազանային հետաքրքրությամբ դիտում էր այդ ամենը...»[25]։

Գրող, հրապարակախոս Մարիետտա Շահինյանը 1926 թ. շրջելով Շուշիի փողոցներով տվել է մահացած քաղաքի նկարագրությունը.

«Երկու բլուրները կանգնած էին իմ առաջ, կանգնած էին տների կմախքների շարքերով։ Չի մնացել ոչինչ, որ կյանք հիշեցնի. ո՛չ տանիքներ, ո՛չ դռներ, ո՛չ պատուհանի շրջանակներ, ո՛չ տախտակե հատակ, ո՛չ երկաթ, ո՛չ ծառ, ո՛չ փայտամած, ո՛չ մեխ։ Միայն ավերակներ, քարեր ու քարեր՝ ինչպես անատոմիական կմախքի քերված, կրծված ու չորացած ոսկորներ։

...Առաջինը, որ ինձ ցնցեց լռությունն էր։ Այդքան սարսափելի լռություն ես չէի զգացել ոչ մի տեղ երբե՛ք, եւ անմիջապես այն ինձ անբնական թվաց։ Հանկարծ մարդուն թվում է, թե լռությունը քրթմնջում է, քարերը շշնջում են, օրորվում, խշխշում եւ գլխիդ մազերը բիզ-բիզ են կանգնում։ Այստեղ 1920 թ. մարտին 3 օրվա ընթացքում հրդեհի ու ավերի են ենթարկվել 7000 տներ եւ մորթվել են,– տարբեր թվեր են ասում, - մեկն ասում է՝ երեք-չորս հազար, ուրիշները՝ ավելի քան 12 հազար հայեր։ Փաստն այն է, որ 35 հազար հայերից Շուշիում չի մնացել եւ ոչ մեկը։ Առուներում այսուայնտեղ դեռ կարելի է տեսնել կանանց վարսափն-

---

[25] *Տե՛ս* М. Шахназаров, «Записи Карабахского солдата» (Воспоминания участника событий 1918–1920 гг. в Нагорном Карабахе), Москва, 1995, *էջ 49։*

ջեր (մազափունջ) չորացած արյան հետքերով։ Երեւակայություն ունեցող մարդն այստեղ դժվար կշնչի. Գնում ես, գնում ծխաթակ պատերի, ավելի ճիշտ՝ նրանց բեկորների մոտով, շտապում ես հեռանալ, եւ վախենում ես, որ երբեք էլ դուրս չես ելնի»[26]։

Նա անդրադարձել է նաեւ Ղազանչեցոց եկեղեցուն. «Ճարտարապետական հրաշք եկեղեցին պատկերվում է որպես քարտեզային ուրվական։ Պատուհանները, տանիքը, զարդերը հանված են, գրությունները քերված»[27]։

1920 թ. մայիսին Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց եւ, այնուհետեւ, երկրամասն Ադրբեջանին բռնակցվելուց հետո առավել ծանր վիճակում հայտնվեցին եկեղեցիները, այդ թվում՝ առաջնորդանիստ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչը, որը դադարեց գործել։ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես վարդապետը, Շուշիում համապատասխան գործունեություն ծավալելու անհնարինության պատճառով, տեղափոխվեց Գանձասար։ Ադրբեջանի իշխանությունների կտրուկ մերժողական դիրքորոշմամբ պայմանավորված, հակառակ Ամենայն Հայոց Ա. կաթողիկոսի գործադրած ջանքերի, 1933 թվականին փակվեց Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմը[28]։

1957 թ. սեպտեմբերին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն այցելում է Արցախ, լինում է Ստեփանակերտում, Շուշիում, Գանձասարում։ Կաթողիկոսին Արցախում ուղեկցում էին ԼՂԻՄ (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ) գործադիր կոմիտեի կուլտուրայի բաժնի պետ Արտաշես Բալայանը ու Մամեդովը։ Լինելով Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում վեհափառը աղոթում է եւ մտովի աղոթքի մեջ խոնարհվում վարպետների առաջ որոնց ճարտար ձեռքերով կառուցվել էր այս հրաշակերտ տաճարը։ Նա անմիջապես մտածում է որոշ նորոգություններ կատարելու մասին, որպեսզի պատմական այս հրաշալի կոթողը պահպանվի[29]։ Արդեն 1958 թ. օգոստոսի 26-ին կաթողիկոսը նամակ է հղում ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի (ՀԵԳԽ) նախագահ Ս. Գասպարյանին, որում անդրադարձել է նաեւ Ղազանչեցոց եկեղեցու

---

[26] *Տե՛ս* М. Шагинян, Нагорный Карабах, Очерк, Москва, Ленинград, 1927, *էջ 381։*

[27] *Տե՛ս* М. Шагинян, *նույն տեղում։*

[28] Վ. Բալայան, Մ. Բալայան, *Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին որպես Արցախի թեմի նստավայր, «Վեմ» համահայկական հանդես, 2024, հ. 1, էջ 80։*

[29] Հայրիկ վարդապետ Ավետիսյան, *Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի հովվապետական այցելությունը Ադրբեջանի Հայոց թեմին, «Էջմիածին», համար (Ժ., էջ 30–31, 1957։*

վիճակին. «Ողբալի կացության է մատնված Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի Ս. Ամենափրկիչ եկեղեցու շենքը, որը ճարտարապետական ու պատմական մի հիասքանչ կոթող կարելի է համարել։ Բարեբախտաբար այս եկեղեցին ամբողջությամբ դեռեւս կանգուն է, փլված է միայն կենտրոնական գմբեթը եւ որոշ ավերածության է ենթարկված շենքի ներսը։ Անցյալ 1957 թ. սեպտեմբերին, երբ անձամբ այցելեցիք այս եկեղեցին, ... ականատես եղանք աննկարագրելի մի տեսարանի։ Բացի փլված գմբեթից, եկեղեցու բոլոր դռներն ու պատուհանները հանված էին, երբեմնի այս աղոթավայրը ուղղակի վեր էր ածվել անասունների ախոռի...։ Այդ պահին մեզ հետ էր նաեւ Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կրոնից գործերի լիազոր պարոն Մամեդովը։ Նա եւս մեզ հետ միասին վրդովվեց այդ տեսարանով եւ համաձայնեց, որ ճարտարապետական եւ պատմական այդ հոյակապ կոթողի նման ողբալի վիճակը հետեւանք է դատապարտելի անտարբերության։ Հենց տեղվույն վրա մենք պայմանավորվեցինք պ-րն. Մամեդովի հետ, որ տեղական իշխանությունները ձեռք կառնեն ամենատարրական միջոցները եկեղեցու շենքը հետագա ավերածությունից պաշտպանելու համար՝ ներսը մաքրելու եւ շենքի դռներն ու պատուհանները հասարակ տախտակով գամելու, որպեսզի անասունները չմտնեն, մինչեւ որ հնարավոր լինի հնությունների պահպանման պետական պատկան մարմինների միջոցով նորոգելու այդ եկեղեցին, որ իբրեւ պատմական ու ճարտարապետական հնություն կարող է միայն պատիվ բերել որեւէ քաղաքի։ Ահա անցել է 1 տարի, սակայն մեր ունեցած տեղեկությունների համաձայն ոչ մի միջոցառում չի կատարված եւ եկեղեցին մնում է նույն անմխիթար վիճակում»[30]։ Պահպանվել է նաեւ Վազգեն Ա. գրությունը ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ա. Ե. Քոչինյանին որպեսզի առավել ուշադրություն եւ խնամք ցուցաբերվի պատկան մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության սահմաններում գտնվող հայկական հնադարյան հուշարձանների նկատմամբ, որոնց մեջ շեշտվում է նաեւ Շուշիի Մայր տաճարը՝ Ամենափրկիչ եկեղեցին[31]։

---

[30] *Վազգեն Ա. Կաթողիկոսի նամակը ՀԵԳԽ նախագահ Ս. Գասպարյանին՝ Պյատիգորսկում, Լեռնային Ղարաբաղում եւ Նախիջեւանում հայկական եկեղեցիների ողբալի վիճակի եւ դրանց պահպանությունը, խնամքը, նորոգումը ապահովելու անհրաժեշտության մասին, 26 օգոստոսի, 1958 թ., «Բանբեր Հայաստանի արխիվների», Երեւան, 2001, № 1, էջ 110–111։*

[31] *Անդ, էջ 113։*

1981 թ. փորձեր կատարվեց վերականգնելու Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին։ Հայաստանից Արցախ էր եկել ճարտարագետ-շինարար Վ. Բաբայանը։ «Հենց հաջորդ օրը նրան ընդունել էր ԼՂԻՄ առաջին քարտուղար Բորիս Գեւորկովը, խոսելու էին ադրբեջանական իշխանությունների հրահանգով Ղազանչեցոց եկեղեցին վերանորոգելու մասին։ Սակայն, ինչպես հայտնի է, Ադրբեջանը վերանորոգելու անվան տակ պատվիրել էր առանց գմբեթի մնացած կառույցի պատերը փոքրիշատե կարգի բերել եւ առանց ծածկի մեկընդմիշտ կոնսերվացնել...»։[32] Զնայած ադրբեջանական իշխանությունների խոչընդոտներին շինարար-վարպետը մինչեւ վերջ հավատարիմ է մնում իր առաքելությանը եւ վերականգնում է Ղազանչեցոց եկեղեցին։ Արցախյան պատերազմի ժամանակ կովկասյան թաթարները եկեղեցին վերածվեցին զինապահեստի։ 1992 թ. մայիսի 9-ին Շուշին ազատագրելուց հետո հայ ազատամարտիկները Հայոց եռագույնը ծածանեցին Ղազանչեցոց եկեղեցու կիսաքանդ, բայց կանգուն մնացած գմբեթին[33]։ Պատերազմական գործողությունների ժամանակ եկեղեցին բավականին տուժել էր, բայց դա չէր ընկճել վերականգնող վարպետին։

1995 թ. մայիսի 19–22-ը Արցախի նախագահի եւ թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանի հրավերով Արցախ են ժամանում Վեհափառ հայրապետ Գարեգին Ա., Մայր աթոռի նվիրակներ, բարձրաստիճան պաշտոնյաներ։ Նրանք լինում են Շուշիում, այցելում Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եւ Ղազանչեցոց եկեղեցիներ, որտեղ վեհափառն աղոթում եւ իր խոսքն է ուղղում ներկաներին[34]։

1998 թ. Ղազանչեցոցն ամբողջովին վերանորոգված էր եւ դարձել էր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդանիստ։ Վերականգնման ընթացքում Ամենափրկիչ եկեղեցու պատին նոր գրություն դրոշմվեց. «Տաճարս վերկառուցել է հմուտ վարպետ-ճարտարագէտ Վօլոդեա բաբայեանը 1981 Թ. 27/10–1998 Թ. 19/7[35]։ Արձանագրությունը փաստում է, որ եկեղեցու վերակառուցումն սկսվել է 1981 թ. հոկտեմբերի 27-ին եւ ընդմիջումներով ավարտվել 1998 թ. հուլիսի 19-ին։

---

[32] *Տե՛ս* https://livenews.am/2021/106418/05/17/27/:

[33] Հ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ, *Շուշիի ազատագրումը, Երեւան, 2007, էջ 40–50։*

[34] *Վեհափառ հայրապետի հովվապետական այցելությունը Արցախի թեմ, «Էջմիածին», 1995 թ., Ե., էջ 93։*

[35] *ՇՈՒՇԻ /ՎՈԼՈԴՅԱ ԲԱԲԱՅԱՆ/ 11.09.2018*, https://www.youtube.com/watch?v=HQ00H8nsrco&t=69s

Համայն հայության հպարտություն հանդիսացող Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին տուժեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ժամանակ։ Հոկտեմբերի 8-ին ադրբեջանական կողմի թիրախավորման եւ հրթիռակոծության ընթացքում վնասվել են եկեղեցու գմբեթն ու խաչաթեւերի տանիքները, աղոթասրահն ամբողջությամբ լցվել էր ավերակված բեկորներով։

Այսօր Արցախն աւար ու աւեր է, Սուրբ Ամենափրկիչը՝ խարխուլ։ Բայց երանի նրան, որ կվերականգնի պատմական արդարությունն ու տաճարը, ուր նորից կհնչեն անմահ պատարագի աղօթները։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ, Շուշի, Ավետիս Յարամիշյանց, կոտորած, թեմ, առաջնորդ:

РЕЗЮМЕ

Статья представляет собой всестороннее исследование истории и архитектуры кафедрального собора Святого Аменапркича (Всеспасителя) в Шуши, Арцах. Исследование прослеживает происхождение жителей квартала Газанчецоц, переселившихся в XVIII веке из Шахкерта (Нахичевань) в Шуши. Описывается строительство деревянной церкви и последующая постройка монументального каменного собора (1868–1887 гг.), отличающегося крестообразным планом, декоративной резьбой по камню и богатыми иконографическими элементами. Упоминаются архитектор Симон Тер-Акопян и благотворитель Авраам Хандамирян.

Особое внимание уделяется резне армян в Шуши во время турко-татарских погромов 1905–1906 гг., а также резне армян в марте 1920 года. Квартал Газанчецоц в Шуши, как наиболее состоятельный армянский район, подвергся жестоким разрушениям, однако собор чудом уцелел. Массовые убийства и резня представлен свидетельствами очевидцев, описывающими зверства над мирными жителями и духовенством.

Далее рассматриваются советский и постсоветский периоды, охарактеризованные постепенным упадком, запустением и последующим восстановлением собора в 1981–1998 годах. Отмечается, что в результате проделанных реставрационных работ храм вновь обрел своё значение как духовный центр Арцахской епархии Армянской Апостольской Церкви.



Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցւոց) եկեղեցի

Մեղրեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցի

Ագուլեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցի





Կանաչ ժամ կամ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

В заключительной части работы рассматривается разрушение собора в ходе Второй Карабахской войны 2020 года в результате ракетно-бомбовых ударов со стороны вооружённых сил Азербайджана. Автор завершает исследование на ноте надежды, выражая стремление к восстановлению исторической справедливости и возрождению духовной жизни.

SUMMARY

The article offers a comprehensive historical and architectural study of the Holy All-Savior (Ghazanchetsots) Cathedral located in Shushi, Artsakh. It traces the origins of the Ghazanchetsots district's population to the 18th-century Armenian migration from Shahkert in Nakhichevan, detailing their eventual settlement in Shushi. The church's architectural legacy is closely examined, from its initial wooden version to the construction of the monumental stone cathedral (1868–1887), characterized by its cross-domed structure, ornate stone carvings, and rich iconographic elements. The account also highlights the names of architect Simeon Ter-Hakobyan and benefactor Abraham Khndamiryan.

The narrative transitions into the 20th century, focusing on the tragic episodes of the Armenian persecution in Shushi during the Armenian–Tatar massacres (1905–1906), and the Armenian massacres in Shushi in 1920. The Ghazanchetsots district, as the wealthiest Armenian quarter, suffered extensive destruction, while the cathedral miraculously remained standing. The 1920 massacre is presented with harrowing eyewitness testimony, including the brutal execution of clergymen and civilians.

The Soviet and post-Soviet periods are examined, highlighting the gradual decline, neglect, and eventual restoration of the cathedral. Revival efforts began in the 1950s and culminated in a comprehensive reconstruction between 1981 and 1998, after which the cathedral was reestablished as the spiritual center of the Diocese of Artsakh.

The study concludes with the 2020 Nagorno-Karabakh war, when Azerbaijani forces bombed the cathedral, inflicting significant damage. The author ends on a hopeful note, expressing the longing for justice and spiritual revival.